Հանձնաժողովի՝ քվեատուփը և հատուկ ծրարները հսկող անդամի գործառույթները

- Մշտապես պետք է գտնվեք ընտրական քվեատուփի մոտ:
- Պետք է վերահսկեք ընտրական քվեատուփը և հատուկ ծրարները:
- Պետք է փակ պահեք ընտրական քվեատուփի մեջ հատուկ ծրարը գցելու ճեղքը:
- Ընտրողին, քվեախցիկից դուրս գալուց հետո, պետք է ցուցում տաք, որ առանձին դրված սեղանից ինքնուրույն վերցնի մեկ հատուկ ծրար և նրա մեջ զետեղի ծալված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- Նրանից հետո, երբ վստահ կլինեք, որ ընտրողի ձեռքին միայն մեկ հատուկ ծրար կա, պետք է բացեք քվեատուփի ճեղքը և ընտրողին ցուցում տաք, որ հատուկ ծրարը գցի ընտրական քվեատուփի մեջ:
- Հատուկ ծրարը ընտրական քվեատուփի մեջ գցելուց հետո խնդրե՛ք ընտրողին ազատել ընտրական տեղամասը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Միայն ընտրողն ունի ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ զետեղելու իրավունք: Բացառություն է «ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողը, որի փոխարեն նրա ներկայությամբ ընտրական քվեաթերթիկը /քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ է զետեղում և ծրարը ընտրական քվեատուփի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը, որն օգնում է նրան քվեախցիկում ընտրական քվեաթերթիկը/ քվեաթերթիկները լրացնել:

- Թույլ չի տրվում ընտրական քվեատուփին մեկից ավելի ընտրողի մոտենալը:

- Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացել լրացված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:

- Մինչև ընտրողի կողմից քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ զետեղելը՝ իրավունք ունեք նրանից պահանջել՝ Ձեզ ցույց տալ, որ ձեռքում սահմանված քանակությամբ ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ (այնպես, որ չխախտվի քվեարկության գաղտնիությունը) և մեկ հատուկ ծրար կա: Ընտրողը պարտավոր է կատարել այդ պահանջը: